

ԿԵՇԱՌԻՄԻ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Հայ ժողովրդի բազմադարեան մշակոյթի ստեղծման մէջ ի-
րենց հարուստ բաժինն ունեն հայ գրչութեան կենտրոնները:
Գրչութեան կենտրոն է համարւում այն բնակավայրը, վանքը
կամ դպրոցը, ուր ձեռագիր է ստեղծուել, այսինքն՝ արտագրուել
ու նկարազարդուել, կազմուել ու նորոգուել եւ վերջապէս՝ պահ-
պանուել: Գրչագիր մատեանները ստեղծում էին հիմնականում
վանքերին ու մենաստաններին կից գրչատներում, պահում մա-
տենադարաններում: Այստեղ ձեռագրեր էին բազմացնում, ինչպէս
ամէնօրեայ օգտագործման՝ ընթերցման եւ ուսուցման, այնպէս էլ
այն յետագայ սերունդներին փոխանցելու համար: Բացի մասնա-
գիտացուած գրչատներից կային եւ առանձին գրիչներ, որոնք
ընդօրինակութիւններ էին կատարում մէկ այս, մէկ այն վան-
քում, քաղաքում եւ աւանում: Նման գրիչներին օգնում էին ոչ
միայն աշակերտները, այլեւ ամբողջ ընտանիքը: Արդիւնքում
ստեղծում էին իւրօրինակ «շրջուն» գրչատուն-արհեստանոցներ:

Հայ գրչութեան կենտրոնների հիմնադիրը Մեսրոպ Մաշ-
տոցն է, առաջին գրչութեան կենտրոնը՝ Վաղարշապատը: Գրերի
գիւտին զուգընթաց Մաշտոցը մշակեց նաեւ նոր գրերով գրելու
տեսութիւնը՝ գրչութեան արուեստը, առանց որի խոր իմացու-
թեան հնարաւոր չէր ձեռագիր ընդօրինակել:

Ձեռագրի ստեղծումը բարդ գործընթաց է, այն ամէնից
առաջ ենթադրում է պատուիրատու (ստացող) եւ գրիչ յարաբե-
րութիւն, ընդօրինակման համար կատարեալ եւ ստոյդ օրինակ,
այնուհետեւ գրչի եւ ծաղկողի հմտութիւն, սրբագրողի գրագէտ
եւ սուր աչք, կազմողի վարպետութիւն: Խոշոր գրչատներում
կային գրչապետեր եւ սրբագրիչներ, որոնք հետեւում էին ոչ
միայն մատեանի գեղեցկութեանն, այլեւ ճշմարտութեանը, որ-
պէսզի դաւանաբանական, գիտական եւ այլ կարգի մեղանչումներ
չինեն: Գրչատներում է պահում եւ զարգանում գիրը, ստեղծ-
ուում եւ կատարելագործուում մանրանկարչական եւ կազմարարա-
կան արուեստը՝ մագաղաթի, թղթի մշակումը, ներկերի ու թա-
նաքների պատրաստումը:

Անուանի շատ գրչութեան կենտրոններում, ոչ միայն ձեռագիր էր ընդօրինակւում, այլեւ ստեղծւում էին՝ պատմագրական, դաւանաբանական, փիլիսոփայական, մեկնողական եւ այլ բնոյթի գործեր։ Այս ամէնի արդիւնքում, գրչութեան կենտրոնները դառնում էին նաեւ ընդհանուր մշակութային կենտրոններ։

Տարբեր ժամանակներում, տարբեր ընդգրկմամբ ու տեսողութեամբ հարիւրաւոր գրչութեան կենտրոններ են եղել՝ Տաթեւի, Վարագի, Նարեկավանքի, Արդինայի, Հաղբատի, Սանահնի, Նոր Գետիկի, Խորանաշատի, Խորվիրապի, Մշոյ Առաքելոց վանքի, Գլածորի, Հերմոնի, Ամասիայի, Կ. Պոլսի, Երուսաղէմի, Նոր Ջուղայի եւ այլ բազում կենտրոններ։ Ձեռագրեր գրուել են իտալիայում, Անգլիայում, Հնդկաստանում, Ռուսաստանում, Հարբեկանում, Լեհաստանում, Եգիպտոսում եւ այլ հայաբնակ երկրներում։ Անուանի ձեռագրագէտ Արտաշէս Մաթեւոսեանի Հայերէն ձեռագրերի համահաւաք քարտարանը ցոյց տուեց, որ Հայերէն ձեռագրեր գրուել են շուրջ 2000 գրչութեան կենտրոններում եւ դրանցից մեզ հասած ձեռագրերն ու յիշատակարանային վկայութիւնները մոտ 30 հազար են։ Գիտնականի մօտաւոր հաշւումներով՝ մեզ հասած 30 հազար ձեռագրերը հայ գրիչների թողած ընդհանուր ժառանգութեան միայն մէկ տասներորդ մասը պէտք է կազմէին¹։

Հայաստան նեխուժող թշնամին նախ այրում էր ձեռագրերն ու մատենադարանները, այսինքն՝ բնակչութեանը գերելուց առաջ սպանում էին նրա հոգին, փորձում էին ոչնչացնել նրա հաւատը։ Այսպէս եղաւ 1068ին, երբ սեղուկները Բաղաբերդում ոչնչացրեցին 10 հազար ձեռագրիր։ Լենգ Թեմուրը, Շահ Աբասը (1606) բնակչութեան տեղահանման հետ նաեւ մեծ քանակութեամբ ձեռագրեր տարան։ Ճակատագրի բերումով՝ ուր ապաստան էր գտնում հայը կառուցում էր եկեղեցի, բացում դպրոց, այնտեղ գրում էր եւ իր հաւատի պատուարը՝ ձեռագիրը։ Այդ է պատճառը, որ այժմ չկայ աշխարհում մի նշանաւոր գրադարան կամ թանգարան, որտեղ հայերէն ձեռագրական հաւաքածու չլինի։ Այսօր Մայր հայրենիքում կայ մօտ 15 հազար հայերէն ձեռագիր, որից 2 հազարից աւելին ձեռագրերից պոկուած պատառիկ մասունքներ են։ 15 հազարից աւելին գտնուում են արտերկրում՝ 4 հազարը Վենետիկում, 4 հազարը՝ Երուսաղէմում, 1300ը՝

1 ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա., Հայերէն ձեռագրերի յիշատակարանները միջնադարեան հայ մշակույթի ուսումնասիրման սկզբանիրիւր, Երևան 1998, 79-ը

Վիեննայում, 800 ձեռագիր Նոր Ջուղայում, մի քանի հարիւրի է հասնում Անթիլիասի, Հալէպի, Լոնդոնի, Հռոմի, Փարիզի, ԱՄՆ-ի, Թիբրիլիսի, Ս. Պետերբուրգի հայերէն ձեռագրերի քանակը:

Մեզ յայտնի 2 հազար գրչատներից մէկն է կեչառիսի հրոշակաւոր վանքի գրչատունը: Այստեղ ընդօրինակուած հարիւրաւոր ձեռագրերից մեզ են հասել ընդամէնը երեքը, նոյնքանի մասին էլ միայն յիշատակարանային տեղեկութիւններ են պահպանուել:

Հայերէն ձեռագրերը հարուստ են յիշատակարաններով, որոնք գրւում են որոշակի սկզբունքով. նախ՝ փառքն է Սուրբ Երրորդութեանը, ապա գրման ժամանակի ու տեղի, նոյն ժամանակի հայոց հայրապետի ու հայոց թագաւորի, տեղի միաբանութեան առաջնորդների ու միաբանութեան անդամների անուանական յիշատակումներ են: Գրիչները անուն առ անուն յիշում են բոլորին՝ մի քաղցր խօսք ասողին, բարի կամեցողին, ձեռագիրն ընդօրինակելու դժուարին աշխատանքի ընթացքում նիւթապէս օգնողին: Ամենաչնչին օժանդակութիւնն անգամ չի վրիպում նրանց երախտագիտութիւնից, ու մէկ Տէր Ողորմեայիւ նրանք ընթերցողի վերաբերմունքն են հայցում: Յիշատակարանները միաժամանակ հարուստ նիւթ են պարունակում ընդօրինակման ժամանակի, պատմական դէպքերի, արհաւիքների, բնական աղէտների, մէկ այլ տեղում եկեղեցիների կառուցման ու նաւակատիքի եւ այլեւայլ պատմամշակութային իրադարձութիւնների մասին: Այդ տեղեկութիւններն ականատես գրիչների հաւաստի վկայութիւններ են, ուստի եւ անգանահատելի պատմական արժէք ունեն: Յիշատակարանների այս նշանակութիւնից ելնելով դեռեւս ԺԹ. դարի վերջին եւ անցեալ դարասկզբին կազմուել են ձեռագրացուցակներ, իսկ ի. դարի 50ական թուականներից սկսած՝ յիշատակարանային ժողովածուներ: Այսօր այդ ցուցակներում եղած ձեռագիր յիշատակարանների մի շօշափելի մասը մնում են արժէքաւոր ձեռագրերից մնացած միակ վկայութիւններ, քանի որ դրանց ձեռագրերն անյայտ կորած են:

Ահա այդպիսին է կեչառիսում գրուած մեզ յայտնի առաջին գործի ճակատագիրը: Այն եղել է ժողովածու Մեկնութիւն Ղուկասու և Յովիանոսու Աւետարանացն Սարգսի կումբի խորագրով: Ձեռագրի մեզ հասած յիշատակարանից իմանում ենք, որ Աստուածատուր պատուիրատուն երկար տարիներ ցանկանում էր ունենալ Սարգիս Կունդի այս նշանաւոր Մեկնութիւնը, ուստի հոգեւոր անդրանիկ որդուն՝ Անդէին յանձնարարում է արտագրել այն:

Գրիչը մանկահասակ է եւ «անհմուտ գրչութեան արուեստին», տկար է մարմնով, սակայն «ըստ սիրոյ աւրէնի» սկսում է գրել «ի վանս հռչակաւոր եւ հրաշազան հանդիսարանիս Կեչառուս, ընդ հռվանեաւ Սուրբ Լուսաւորչիս Գրիգորի»² եւ աւարտում նոյն տեղում «քազում թախանձանաւէ եւ տաժանմամբ»՝ 1184 թուականին։ Հնդօրինակութեան պատասխանատու գործընթացում նրան օգնում են՝ Առաքեալ քահանան՝ գրոցը սպասաւորելով, Աստուածատուր աբեղան՝ նիւթերը պատրաստելով։ Անդէ գրիչն ու Աստուածատուր ստացողը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի շուրջը համախմբուած սրբակրօն վարքով յայտնի միաբաններից են եւ վայելում են առաջնորդի՝ հայր Պետրոսի հոգածութիւնը։ Վերջինս հեզ էր Մովսէսի նման, ողորմած՝ ինչպէս Դաւիթը, գթացող՝ ինչպէս Երեմիան, հիւրընկալ ու օտարասէր՝ ինչպէս Աբրահամը, որբերի ու պանդուխտների հայր էր՝ Յորի օրինակով եւ Սոլոմոնի պէս հանճարեղ էր։

Հայր Պետրոսը իր հարազատի՝ Յուսէփի միջոցներով վերանորոգել էր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որ վերագտել էր իր նախկին տեսքը «պայծառապէս նոխացեալ ի սկզբանն եւ դարձեալ իրքնացեալ ըստ յանախելոյ մնաց քրիստոնէից»։ 1184ին Սուրբ Լուսաւորիչ եկեղեցին ոչ միայն նորոգւում է արտաքնապէս, այլեւ այս սուրբ այլը իր շուրջն է հաւաքում միաբանութեան հին անդամներին, դառնում է «...պատճառ քարեաց հանդիսաւոր շնորհի սուրբ եղբայրանոցիս...»։ Նրա վանահայրութեան տարիներին միաբան հոգեւորականների թիւն օրէցօր աւելանում էր։ Թէեւ Աստուածատուր աբեղան հայր Պետրոսի առաքինի եւ սրբակրօն վարքի մասին «փոքր ի շատէ» էր գրում, սակայն իրաւացիօրէն գտնում էր, որ «զի քազումն ի սակաւուցն նանաչի»³։

Այս նորոգման մասին գրաւոր վկայութիւն կայ նաև Գրիգոր Լուսաւորիչ տաճարի վրայ, սակայն արձանագրութեան մի մասը մնացել է կցակառոյցի տակ, հատակտոր է, ուստի անցեալ դարի ուսումնասիրողները վիմագրի թուականը (1161-1166) եւ պակասող մասերը վերականգնելու համար օգտագործել են սոյն յիշատակարանը⁴։

2 Հայերէն ձեռագրերի յիշատակարամներ, Ե.-ԺԲ. դարեր, (աշխ.) ՄԱԹԵՒՈՍԵԱՆ, Ա., Երեւան 1988, 245։

3 Անդ, 246։

4 ՅՈՎԱԿԻՓԵԱՆ, Գ., Խաղբակեամբ եւ Պոշեամբ. Հայոց պատմութեան մէջ, մասն Բ., Ամբիլիաս 1969, 161-162։

ԺԳ. դարի վերջին կեչառիսում է գործել յայտնի վարդապետ, անյաղթ հռետոր, մեծ րաբունի, Խաղբակեան-Պոօշեան իշխանական տոհմից սերող՝ Խաչատուր կեչառեցին, Սիւնեաց մետրոպոլիտ պատմիչ Ստեփաննոս Օրբէլեանի ընկերն ու համախոհը:

Անուանի այս վարդապետի խնդրանքով ու պատուէրով է որ Ստեփաննոս Օրբէլեանը գրում է ոչ միայն իր յայտնի Ռորը (1299ին), այլև Հականառութեան (1302ին) ժամանակակից արդեօք կեչառեցին Օրբէլեանի հետ Հայոց միջնադարեան հռչակաւոր համալսարանում՝ Գլածորում, դժուար է ասել, սակայն նա սերտ յարաբերութիւններ է ունեցել համալսարանն աւարտած Օրբէլեան պատմիչի ու Պօղոս Ակներցի յայտնի գրչի ու մանրանկարչի հետ։ Վերջինիս՝ «...քաջ գրչապետի, վարդապետի» պատուէրով նա գրում է Գանձ սրբոց առաքելոցն Թադէոսի եւ Բարդուղիմէի, Յուղայի Յակոբեան եւ Նմաւոնին, որի սկզբնատողերը յօդում են՝ «Խաչատուր»⁵:

Խաչատուր կեչառեցու մատենագրական ժառանգութեան մեծ մասը րաբունապետը գրել է կեչառիսում՝ իր վանահայրութեան տարիներին։ Այստեղ է, հաւանաբար, նա կատարել Ալեքսանդր Մակեդոնացու պատմութեան իւրօրինակ մշակումը մատչելի շարադրանքով։ «Ուկ ընթերցողք յիշման արարէք արժանի զաշխատող սորա, որ քերթողօրէն արարի անխոտորնակ,՝ որ ի յընթեռնուկն իմասցիս պուետիկոսք եւ քարտուղարք, եւ ապա գիտացեն զաշխատանս սորայ»,՝ գրում է նա ձեռագրի էջերից մէկում։ Աշխատանքի նախադրութիւն շարագրութեանց գրոց աշխարհակալին Աղեքսանդրու թագաւորին մէջ իշխատուր կեչառեցին Արիստոտէլին է համարում Պատմութեան հեղինակ⁶։ Սակայն յենուելով նաեւ Մովսէս Խորենացու Պատմութեան վկայութիւնների վրայ՝ բանասէրները աշխատանքի հեղինակ են համարում կեղծ կալիսթենէսին, միաժամանակ անհերքելի փաստերի վկայակոչմամբ գործի թարգմանիչն են համարում Մովսէս Խորենացուն, թարգմանութեան վերջին սահմանը՝ Ե. դարի 80ական թուականները⁷։ Խմբագրելով գործը, կեչառեցին գրել է նախաբան, վերջաբան,

5 Անդ, 176: ԱՎԴԱԼԲՔԻԳԵԱՆ, Մ., Խաչատուր կեչառեցի, Երեւան 1958, 42:

6 Հայերէն անոագրերի յիշատակարաններ, ԺԳ. դար, (աշխ.) ՄԱԹԵՒՈ-ՍԵԱՆ, Ա., Երեւան 1980, 895: Այսուհետ՝ ԺԳ. դարի յիշատակարաններ:

7 Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, Վենետիկ 1842, 73:

8 Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, (աշխ.) ՍԻՄՈՆԵԱՆ Յ., Երեւան 1989, 11-12: Այսուհետեւ՝ Պատմութիւն Աղեքսանդրի:

յօրինել պատմութեան որոշակի հատուածները եղրափակող հարիւրաւոր սիրուած կաֆաներ՝ գրուած ժամանակի խօսակցական լեզուով, աւելացրել յիշատակարաններ, տնօրինականներ, բարառնութիւններ: Այս գործի վենետիկեան հրատարակութեան վերջում կայ Խաչատուր Կեչառնեցւոյ բարառնութիւն ի մահն Աղեքսանդրի (1-4): Չորս բարառնութեան վերջում մատենագիրը համեմատութիւններ է անցկացնում Աղեքսանդրի գործունէութեան առանձին դրուագների ու Քրիստոսի տէրունական անքննելի գործերի միջեւ (18 տնօրինականներ), որին յաջորդում է Հեղինակի յիշատակարանը. «Խսկ զայս պատմութիւնս աշխարհակալին Աղեքսանդրու, զոր գրեցի իմով ձեռամբ սակս օգտի ինձ եւ այլ համբակաց, որ կամին օգտիլ յԱղեքսանդրէ, զի թէպէտ եր եւ յընտիր եւ ի հին օրինակէ, այլ անյարմար եւ շաղփաղփէ: Վասն որոյ գտևալ եւ ժերեալ ժերթողորէն արարի ամխոտորնակ հանապարհ, զոր ի յընթեռնուկն իմասցին պուետիկոսք եւ ժարտուղարք եկեղեցւոյ եւ ապա գիտացեն զիմ աշխատանս ի սմա, զոր լիապէս վաստակեցի»⁹: Բնագրի ԺԶ. դարում Զաքարիա Գնունեցու խմբագրման, նոր կաֆաների, ինչպէս նաեւ ձեռագիր գեղեցիկ գրչական ու մանրանկարչական ձեւաւորման հետ, Կեչառեցու այս յիշատակարան են մտնում նոր խմբագրողի կատարած աշխատանքի մանրամասներ¹⁰:

Այստեղ է վարդապետը գրել նաեւ բանաստեղծութիւններ, ողբեր, տաղեր, ինչպէս նաեւ մի ճառ՝ «Խաչատուր Կեչառնեցւոյ ժողովեալ ստոյգ օրինակէ Վասն գալստեան Աստուծոյ առ մարդիկ, կուսածին թագաւորին Քրիստոսի Աստուծոյ մերոյ զժամանակն եւ զբագաւորն համառօտիւք»¹¹:

Խաչատուր Կեչառեցին լաւ, հմուտ գրիչ էր ու մանրանկարիչ: Դժբախտաբար, նրա ընդօրինակութեամբ ոչ մի ձեռագիր մեզ չի հասել, ինքնագրի նմոյշ կայ միայն մի ձեռագրում: Այն ժողովածու է, պահւում է Մաշտոցի անուան Մատենադարանում (ձեռ. 1879): Յայտնի է միայն ձեռագրի գրիչն ու ստացողը: Գրիչը՝ Մովսէսն է, որ մատեանն օրինակել է Գերսամ վարդապետի խնդրանքով: Որոշ ժամանակ անց ժողովածուն դառնում է Խաչատուր Կեչառեցու սեփականութիւնը¹²:

9 Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, Վենետիկ 1842, 195, ծնք. 1:

10 Պատմութիւն Աղեքսանդրի, 363:

11 ԱՎԴԱԼԲԵԳՆԱՆ, Մ., Խաչատուր Կեչառեցի, Երեւան 1958, 189-193: ՀԱՄԱՐԱԾԻ հայ եկեղեցական մատենագրութեան, Էջմիածին, 2003, 638-640:

12 ԺԳ. դարի յիշատակարաններ, 910:

Ժողովածուի նիւթերի մեծ մասի ընդօրինակումը ժԳ. Դարին բնորոշ գրչութեամբ է: Ընօրինակման գիրը՝ բոլորգիրն է: Ձեռագրում այս գրատեսակը ներկայանում է նաեւ իր նախնական անցումային վաղագոյն ձեւերով (իսաոր ուղղագիծ երկաթագրի հետ): Տառաձեւերի օգտագործման նման բազմազանութիւնը մի ժողովածուում բացատրւում է այնտեղ ամփոփուած նիւթերի սկզբնական՝ գաղափար օրինակի գրչութեամբ: Գրիչը բաւական հմուտ է նաեւ այդ գժուարին գրատեսակով գրելուն: Մատեանը նաեւ նկարազարդ է, սկսւում է գեղեցիկ կիսախորանով, ունի լուսանցազարդեր եւ զարդագրեր: Ձեռագրի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ սկիզբը թափուած է եղել ու լրացուել: Սկզբի աւելացուած Յա թերթը տարբերուում է ոչ միայն ընդօրինակման գրով, այլեւ թղթով: Սակայն նկարազարդ այս էջում եւս բացակայում է ժողովածուի խորագիրը, որն աւելացուել է կիսախորանի մէջ երկրորդ ստացողի ձեռքով. «Պատճառ լայն եւ նուրբ գրեա[Ա]ց առեալ ի հարցն սրբոց եւ ի վարդապետաց եւ ի մի հաւաքեալալ մեծ բարունապետին Գրիգորի, որդոյ Արասայ: Քրիստոս Աստուած Մեսիայ եւ Մանուկելն շնորհաւորացէ զայ վարդապետի Խաչատրոյ»¹³:

Բացի Յա էջում Խաչատուր անուան այս յիշատակութիւնից, ձեռագրում -երկու զարդագրերի մէջ կան այս ձեռքով գրուած մանր յիշատակագրութիւններ, որոնցից մէկը յստակեցնում է. «ԶԽաչատուր վարդապետ Կեչառվեցի, ստացող սուրբ տառիս յաղաւրս յիշեա» (16ա): Ուրեմն, այս կարեւոր ձեռագրի երկրորդ ստացողն ու նորոգողը յայտնի բարունապետ Խաչատուր Կեչառեցին է: Նա ոչ միայն մէկ այլ ձեռագրից վերցուած այս սկզբի թերթն է աւելացրել, պակասող սկիզբը վերականգնելու համար, այլեւ բնագրի նիւթերում կատարել է սրբագրումներ ու յաւելումներ: Սրբագրումներն ու յաւելումները երբեմն իրենց տեղում չեն¹⁴: Պատճառաց գիրքի բնագրային քննութեանը նուիրուած վերջին ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ կե-

13 Կեչառեցու ձեռքով յաւելուած խորագրի կարեւորութեան վեհաբերեալ տե՛ս Շիրինեան, Մ., Քրիստոնէական վարդապետութեան ամսիկ եւ հելեմիստական տարրերը, Երեւան 2005, 195, 196:

14 Երեւան, Մաշտոցի անուան Մատենադարան (ՄՄ), ձեռ. 1879, էջ 164ա, 221թ, 223թ եւ այլ: Առ Մեղենիս Անտիոքացի ձառը՝ «Գիրք պատճառաց»ում Գրիգոր Նիւսացու անուամբ է. Խաչատուր Կեչառեցին վերագրում է Գրիգոր Աստուածաբանին: Շիրինեան, Մ., Mediaeval Armenian Collection on Biblical Exegesis, New Rachelle 2013 (in print), 14 ծմբ. 80:

չառեցու բնագրային սրբագրումները կատարուել են հիմնականում ժողովածուի «նուրբ գրեանքի» պատճառների հատուածներում¹⁵:

Ձեռագրական ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ մատեանը նորոգուել է եւս երկու անգամ, մէկը՝ Ժի. դարում. բնագրային միջամտումները, ուղղումները ու լրացումները, երբեմն կատարուել են անփոյթ, հապճեպ եւ դժուար ընթեռնելի նոտրգրով¹⁶: Միւսը՝ վերջին սրբագրութիւնը կատարուել է Ժթ. դարի վերջին - ի. Դարասկզբին՝ շղագրով: Այս նոյն շղագրով է կազմուել նաեւ Պատճառաց գրքի նիւթերի ցանկը¹⁷:

Խաչատուր Կեչառեցու կողմից Գրիգորի որդի Արասի Պատճառաց գրքի սրբագրման, նախնական հեղինակային գաղափար օրինակի վերականգնման փորձը այս գործի մեզ հասած հնագոյն եւ միակ օրինակը դարձնում են կատարեալ, ընտիր եւ ստոյգ:

Դա հաստատում է նաեւ բնագրային քննութեամբ: Բնագրագէտ Մ. Է. Շիրինեանը ժողովածուի բացառիկ նիւթերը ու նրանց լուծմունքները համարում է թարգմանութիւններ, իսկ ժողովածուն՝ մեկնութիւնների հայերէն թարգմանուած աղբիւրների առաջին հայկական հանրագիտարան¹⁸:

Ժժուար է ասել, թէ կեչառեցին որտեղ է արել այս գործի սրբագրումը, քանի որ մանր յիշատակագրութիւնում բացակայում են յիշատակարանային մաս կազմող գլխաւոր տեղեկութիւնները: Սուրբ հայրերի, նուրբ գրեանքի նիւթերի, պատճառների ժողովածուի բովանդակութիւնից ելնելով, պէտք է ենթադրել, որ դեռեւս ԺԳ. դարասկզբից, երբ ստեղծուել է այս ժողովածուն¹⁹, օգտագործուել է որպէս արտաքին եւ նուրբ գրեանց

15 Շիրինեան, Մ. - ԽԱԶԱՏՐԵԱՆ, Գ., Գիրք Պատճառաց, ի Աշտամակ, Երևան 2011, 31: Այսուհետեւ՝ Գիրք պատճառաց:

16 ՄՄ ձեռ. 1879, 13ա-16ա:

17 Անդ, 377ա-83ա:

18 Գիրք Պատճառաց, 32:

19 Ա. Մարեւոսեանը գտնում է, որ Գրիգոր Արասի որդի վարդապետը ապրել ու ստեղծագործել է ԺԳ. դարի սկզբին: Մովսէս գրիչը ըմդօրինակել է հաւամաքար ԺԳ. դարի երկրորդ կեսին Գերասմ Վարդապետի համար, որից յետոյ ձեռագիրը դառնում է Խաչատուր Կեչառեցու սեփականութիւնը (նոյն դարավերջ եւ յաջորդ դպրասկիզբ): ԺԳ. դարի յիշատակարաններ, 910 ծմբ. 2: Ձեռագրի ըմդօրինակումը 1237ից յետոյ՝ ու

դասագիրք: Հայոց վարդապետարանների դասընթացում նման դասագրքերը օգտագործուել են հիմնական դասաւանդուող առարկաների հիմնական դասագրքերի ու Սուրբ գրոց մեկնութիւնների հետ։ Այստեղից էլ, ենթադրաբար, Պատճառաց գիրքի այս խմբագրման վայրը կարելի է համարել կեչառիսը, որի վարդապետարանի ղեկավարն ու բարունապետն էր այդ տարիներին Խաչատուր կեչառեցին։

Կեչառեցին նկարազարդել է իր աշակերտի՝ Բարդաղ գրչի ընդօրինակած Աւետարանի մի էջը, որ եղել է ձեռագրում, երբ այն պահուել է Նախիթեւանի Վարդաշէն գիւղի Սուրբ Աստուածածին եկեղեցում։ ԺԹ. դարու վերջին ձեռագրի գլխաւոր յիշատակարանը սեղմ արտագրել է Սմբատեանը ու հրատարակել «Երնջակում»։ Ամենայն հաւանականութեամբ գլխաւոր յիշատակարանը դժուարընթունելի է եղել եւ այդ պատճառով Սմբատեանը Աւետարանի գրիչ է համարել նշանաւոր Խաչատուր կեչառեցուն «Ճեռամբ նուաստ եւ ոսկեգիր գրչապետի, մեծ բարունապետի՝ Խաչատուր կեչառեցոյ» եւ ծանուցել, որ այն ընդօրինակուել է «ի բուականութեանս արեթական սումարին ԶԿԴ [1314]»²⁰։

ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ-ժողովածուի 456 համարի յիշատակարանում (1349) կայ այս նոյն ձեռագրի նոյն գլխաւոր յիշատակարանի մէկ այլ՝ ընդարձակ ընդօրինակութիւն։ Անցեալ դարասկզբին այս Աւետարանի բոլոր յիշատակարաններն արտագրել է Երուանդ Լալայեանը։ Այն եղել է Լալայեան անտիպ ցուցակում, որն այժմ չկայ՝ ի թիւս 800ի չափ այլ ձեռագրերի նկարագրութիւնների։ ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ ժողովածուում այս յիշատակարանի ընդարձակ ընդօրինակութիւնը լ. Խաչիկեանը (գրչութեան ժամանակի եւ յետագայի յիշատակարաններով) գտել է 1920ական թուականներին Լալայեան ցուցակից կատարուած մի ընդօրինակութիւնից²¹։ Լստ այդ ընդօրինակութեան, Եղեգիս գիւղաքաղաքում, Բարդաղ գրչի ձեռամբ 1315ի աւարտուած Աւետարա-

ԺԳ. դարու երկրորդ կետում գրուած են համարում Մ. Շիրինեանն ու Գ. Խաչատրեանը (Գիրք՝ Պատճառաց, 25):

20 ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԽՍ.ԶԻԿԵԱՆ, լ. (կազմեց), Երևան 1950, թիւ 152, 117 եւ ծմբ. 1: Այսուհետեւ՝ ԺԴ. Յիշատակարաններ։

21 ԺԴ. Յիշատակարաններ, 376 ծմբ. 3:

նում եղել է մի գարդանկար, որի բոլորակում եղել է այսպիսի մի չափածոյ յիշատակարան.

«Բոլորակիս շրջապատի
Դուք յիշեցեք զիս՝
Տարութի զԽաչատուրն
Կեչառեցի: Թվին ԶԿԳ [1314]:»

L. Խաչիկեանը թէական ձեռագրի ծաղկող է համարում անուանի մատենագրին²²:

Կէս դարից աւելի է անցել ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշակարանների հրատարակումից եւ այժմ այդ ձեռագիրը Մաշտոցի անուան Մատենադարանում է²³: Աւետարանը գրուել է Սահակ քահանայի պատուէրով: Գլխաւոր յիշատակարանում գրիչը իր մասին տալիս է որոշ մանրամասներ: Պարզում է, որ Կեչառեցու վարդապետարանում է սովորել Բարդաղ գրիչը, որն ընդօրինակութիւններ է կատարել Վայոց ձորում: «ձեռամբ նուաստ եւ ոսկեգիր գրչապետի Բարդաղի, աշակերտի մեծ բարունապետի Խաչատուր Կեչառեցի»²⁴: Դժբախտաբար այժմ բացակայում է սկզբի վերը նշուած թերթը Խաչատուր Կեչառեցու նկարագրումով եւ 1314ի ինքնագիր յիշատակարանով:

Կեչառիսից մեզ հասած առաջին ձեռագիրը ԺԵ. դարի վերջի ընդօրինակութիւն է: Այն փոքրադիր Աւետարան է, գրուած լաւ մշակուած մագաղաթի վրայ, բոլորգրով: Զնայած յառաջացած հասակին, Գալուստ արեղայի գիրը գեղեցիկ է եւ հաստատուն: Գրիչը կատարելապէս տիրապետում է գրչութեան արուեստի կանոններին: Նա որդին է Սամուէլ քահանայի ու Մարթա խաթունի: Սովորել է Հօրեղբօր՝ Դանիէլ արեղայի մօտ, որ Կեչառիսի ուխտի միաբաններից է: Սուլը գիրքը գրել է Գալուստ արեղան «ի վայելումն» հարազատ եղբօր՝ Յորդանանի ու նրա որդիների՝ Մարտիրոս քահանայի եւ Խաչատուր սարկաւագի: Գրչի միջոցներով է գրուել, նկարագրուել ու կազմուել այս Աւետարանը «...ի քուականութեան Հայկակեան տումարի ՁԽ [1491]... ի յաստուածապահ գաւառն Բուժկան, ի յերանահանգէտ եւ գերահոչակ ուխտս

22 Ուստի ծանուցում է «Թւում է պէտք է նոած լինի «զիմ»: Այդ դէպքում յիշատակագրութեան հեղինակը կը լինի ոչ թէ Խաչատուր Կեչառեցին, այլ նրա աշակերտ Բարդաղը»: ԺԴ. յիշատակարաններ, 377 ծնբ. 2:

23 Անդ: ՄՄ ձեռ. 9721:

24 ՄՄ ձեռ. 9721, 236ա:

կեչառուս»²⁵: Աւետարանի նկարագարդումը՝ Մկրտիչ ծաղկողինն է: Ձեռագրում այդ մասին մանրանկարիչը յիշատակագրութիւններ է թողել աւետարանիչներից երկուսի՝ Մատթէոսի եւ Մարկոսի պատկերների տակ. «Ո՞վ եղբայր սակաւ նկարող պատկերիս՝ զՄկրտիչ յիշեցէք ի Քրիստոս»²⁶: Նկարագարդ էջերը պատկերագրական առումով՝ միջինից բարձր մակարդակի են:

Այդ նոյն՝ 1491ին Գալուստ գրիչը նորից իր միջոցներով մի Աւետարան էլ էր ընդօրինակել: Այս երկու ձեռագրերն էլ պահուել են Սեւանի աւազանում: Մատենաղարանում պահուող օրինակը Սեւանավանքի միաբանութեան մատանաղարանի 14 համարի ձեռագրիրն է: Միաւը՝ նոր Բայագէտում է եղել: Աւետարանը նկարագրել ու յիշակարանը համառօտ Գեղարքունիքին նուիրուած իր աշխատանքում տպագրել է արքեակիոպս Մեսրոպ Մմբատեանցը²⁷: Այս Գրքի գտնուելու վայրն այժմ անյայտ է:

Այս երկու մատեանների գլխաւոր յիշատակարանները նոյն կառուցուածքն են ունեցել, համառօտուած հատուածները բառառ բառ բառ նոյնական են, նոյնն է գրիչը, նոյնն է թուականը, նոյնն է ստացողը: Առաջին հայեացքից թւում էր թէ մենք նոյն ձեռագրական ընդօրինակութեան հետ գործ ունենք: Սակայն, այնուամենայնիւ, մէկ տարբերութիւն յիշատակարանների մէջ կայ. Մաշտոցի անուան Մատենաղարանի ձեռագրում կեչառուսը թուփկան գաւառում է, իսկ այժմ բացակայող ձեռագրում՝ Մաղկանց գաւառում: Բանն այն է, որ շատ ընդօրինակութիւններ անող գրիչները յաճախ ունենում էին յիշատակարան գրելու իրենց իւրօրինակ կաղապարները, որտեղ բաց էին թողնուում մի քանի մանրամասների համար տեղեր՝ ժամանակի, ստացողի, նրա ծնողների ու հարազատների անունները: Ամէն անգամ նոր ձեռագրիր գրելիս գրիչն այդ կաղապարում ըստ ստացողի ցանկութեան կատարում էր տարբեր լրացումներ: Այսպէս էլ այս դէպքում է: Նման յիշատակարանային կաղապարներ ունէին ոչ մի-այն առանձին գրիչներ, այլեւ շատ յայտնի խոշոր գրչատներ:

Այս նոյն դարի ընդօրինակութիւն պէտք է համարել Մատթէոս գրչի Մաշտոց ձեռաց ծիսական ժողովածուի ընդօրինակու-

25 ՄՄ ձեռ. 3989, 622: Հմմտ. ԺԵ. դարի հայերէմ ձեռագրերի յիշատակարաններ, Գ., 164:

26 Անդ, 165:

27 ՄՄԲԱՏԵԱՆՑ, Մ., Տեղագիր Գեղարքումի ծովագարդ գաւառի, որ այժմ նոր Բայազիտ գաւառ, Վաղարշապատ 1896, 48:

Թիւնը: Գրուած է թղթի վրայ գեղեցիկ բոլորգրով, սկզբում ունի կիսախորան, որ գրչի գործն է։ Պարունակում է 14 կանոն՝ մկրտութեան, պսակի, հաղորդութեան, մեռելաթաղի, հոգեհանգիստի, խաչ օրհնելու, ջուր օրհնելու եւ այլ կանոններ որոնք անհրաժեշտ են քահանայական դասին ամէնօրեայ ծիսական կարգ մատուցելիս։ Ուստի ձեռագիրը շատ է օգտագործուել, մաշուել է ու որոշ էջեր թափուել են։ Բնագրի խաթարուած լինելու հետ, թափուել է նաեւ գլխաւոր յիշատակարանի վերջը, անյայտութեան մէջ թողնելով ոչ միայն մատեանի աւարտման ժամանակն, այլեւ այն վայելողի անունը։ Յայտնի է միայն, որ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի, Սուրբ Աստուածածնի, Սուրբ Նշանի եւ Սուրբ Յարութեան հովանու տակ այստեղ «... ի հայրապետութեան տեառն Թադէոսի, որ նատեալ է ի Վաղարշապատ քաղաքն եւ առաջնորդութեան Սուրբ ուխտիս տէր Փիլիպոսի» Մատթէոս գրիչն աւարտում է ձեռագիրը²⁸, «Մաշտոց ձեռացի» թուագրման հարցում նշանակութիւն է ստացել մատեանում մի թղթիկի վրայ այլ ձեռքով գրուած հետեւեալ ցուցումը «... գրեալ է ի քուղքս բամբակի ի Մատթէոս կրօնաւորէ, ի հայրապետութեան տեառն Թադէոսի, յամի ազգական Զինը եւ Փրկչական 1499, ի վանս կեչառիս յերկրին Մաղկնու»։ Ուստի, ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի ժողովածուում Լ. Խաչիկեանը յիշատակարանը տեղադրում է 1499 թուաշարքում²⁹։ Անաւարտ յիշատակարանում մեզ հետաքրքրեց մի փաստ եւս, ականատես գրիչը Վաղարշապատում հայրապետական Աթոռին յիշում է մի նոր հայրապետ՝ «տէր Թաթէոս» անունով։ ԺԵ. դարի վերջին եւ ԺԶ. դարասկզբին Հայոց Հայրապետական աթոռին այդ անունով կաթողիկոս չի յիշում, քանի որ վերջինս, ամենայն հաւանականութեամբ, աթոռակից կաթողիկոս էր։ Նման պաշտօնավարում կար դեռեւս Գրիգոր Զալալբէկեանց Մակուեցու ժամանակներից (կաթողիկոս էր 1443ին աթոռակիցն՝ Արիստակէս)։ Օրմանեանն իր նշանաւոր Ազգապատում աշխատանքում հիմք ընդունելով Առաքել Դաւթի-ժեցու վկայութիւնը Յովհաննէս է։ Աջակից կաթողիկոսից յետոյ իր աթոռակացի՝ «միւս այլ տէր Սարգիս»ի 1484ին կաթողիկոս լինելուն, վերջինս համարում է «Սարգիս Գ. Միւսայլ»։ Ինչպէս իրենից առաջ եղած հայրապետները, այս վեհափառն էլ ունէր իր աթոռակիցները՝ 1484ին, Արիստակէս Գ. որից յետոյ Թաղէոսը՝

28 ՄՄ ձեռ. 1039, 132թ: Հմմտ. ԺԵ. դարի յիշատակարաններ, Գ., 281-282:

29 Անդ, 282 ծնթ. 1:

1499ին «զոր չեմք վարանիլ Թաղեռս Ա. կոչել պարզապէս արռուակցութեան տեսակէտէն», իսկ 1504ին Մարգիս Միւսի կողքին Դաւրիժեցին կաթողիկոսական՝ Աթոռին յիշում է Եղիշէ՝ Բ.³⁰: Ինչպէս տեսնում ենք, Թաղէռս հայրապետի փոխանորդութեան 1499ին համընկնում է ձեռագրում եղած ներդիրի թուականի ցուցիչի հետ:

Կարինի Մուտուրկու գիւղի Մուրք Յակոր եկեղեցում է պահուել մի Աւետարան, որն ունեցել է գեղեցիկ նկարագարդում, տեղում են եղել չորս աւետարանիչների պատկերները, սակայն Յովհաննու Աւետարանից սկսած՝ խախտուած է եղել բնագիրը պակաս թերթերի պատճառով։ Թերթերի հետ թափուել է նաեւ ձեռագրի գլխաւոր յիշատակարանը։ Բայց եւ այնպէս, Աւետարանը հարուստ է եղել մանր յիշատակագրութիւններով՝ թողնուած գրչի եւ ծաղկողի ձեռքով իւրաքանչիւր Աւետարանի վերջում եւ մանրանկարների պատկերների տակ։ Դրանցից իմանում ենք, որ ձեռագրի գրիչը Եսային է, ստացողը՝ Աբրահամի որդի Յովհաննէս կրօնաւորն է, որի պատուէրով էլ Աւետարանը «Ծաղկի ձեռամբ Փիլիպպոսի, ի բվականութեան Հայոց ՌժԳ [1564] Կեչառաց Սուրբ Լուսաւորչին ...»³¹։ Եսայի գրչին իր դժուարին աշխատանքում «շատ սպասաւորութիւն» էր արել ու իրեն օգնել պատուիրատուի քոյրը՝ Զիշաք ապաշխարողը³²:

Այս նոյն Փիլիպպոս ծաղկողի ձեռքով է նկարագարդուել Մաթեւոս արքեպիսկոպոսի համար արտագրուած Աւետարանը։ Մագաղաթեայ Աւետարանի գիրը՝ բոլորգիրն է սահուն ու յըստակ, վարժ ու գեղեցիկ։ Ձեռագրում այժմ մնացել են միայն Մատթէոս եւ Մարկոս աւետարանիչների պատկերները (2թ, 99թ), լուսանցային երկու պատկերները (Պաբրիէլ հրեշտակապետ, Եղիշաբեթ), չորս աւետարանառաջները ու բազմաոճ լուսանցագրդերը, որոնք մանրանկարչի վարպետ լինելու մասին խօսուն վկայութիւններ են։ Մատթէանը ուրած է, շատ էջեր խոնաւութիւնից կպած ու պատուած, բնականաբար՝ այդ տեղերում բնագիրը եղծուած ու անընթեռնելի։ Բարեբախտաբար, լաւ է

30 ՕՐՄԱՆԵԱՆ, Մ., Ազգապատում, Բ., Էջմիածին 2001, 2567:

31 ՔՈՍԵԱՆ, Հ., Ցուցակ հայերէն ձեռագրաց Կարմոյ գիւղերու, ի Համելս Ամսօրեայ, 1963, 506-507:

32 Ծաղկողի յիշատակարանը գրուած է Մատթէոս աւետարանչի պատկերի տակ, գրչի եւ ստացողի յիշատակարանները՝ Մարկոսի եւ Ղուկասի Աւետարանների վերջում։ Անդ, 507:

պահպանուել ձեռագրի վերջում եղած գլխաւոր յիշատակարանը, որն աւարտւում է թուականի, վայրի ու ծաղկողի անուան յիշատակութեամբ. «Ի թվականս Հայոց Ռժ [1561] Ակարեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ սուտանուն Փիլիպոսի, ի Սուրբ եւ ի հռչակաւոր ուխտիս Կեչառաց Սուրբ Լուսաւորչիս եւ ԺԱ. Անուան եկեղեցեացս. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն»³³:

Տեղի միաբանների ձեռքով ընդօրինակուած ձեռագրերի մեծ մասը պահուել է վանքի մատենադրարանում: Կեչառիսի մատենադրարանը հարստանում էր նաեւ այլ տեղերում գրուած ձեռագրական նմոյշների գնման ու տեղի առաջնորդների, միաբանների եւ գիւղի բնակչութեան նուիրատուութեան միջոցով: Այդ նուիրատուութիւններն արւում էին իրենց հանգուցեալ ծնողների ու հարազատների հոգու փրկութեան համար:

Կեչառիսի մատենադրարանում են պահուել Առաքել սարկաւոդի՝ Գեղամայ երկրում օրինակած Աւետարանը³⁴, Մկրտիչ Կեչառեցու համար Շողագավանքում ընդօրինակուած Աւետարանը: Գրիչ Հայրապետը ձեռագիրը պատուիրատուին է յանձնում 1677ին: Մկրտիչ Կեչառեցին կտակում է Աւետարանն իր մահից յետոյ նուիրել Կեչառիսի Սուրբ Լուսաւորիչ եկեղեցուն: Եկեղեցու սպասաւոր Սարգիս կրօնաւորն իր հերթին խոստանում է պահել պահպանել մատեանը, հեռու պահել ջրից, կրակից եւ ամենայն պատահարից: Այսուհանդերձ, ձեռագիրը 1723ին գերի է ընկնում եւ նոյն թուականին էլ Յարութիւնը գնում է այն ու նորից ի պահ յանձնում Սուրբ Լուսաւորիչ եկեղեցուն³⁵:

Այսօր էլ, թերեւս, կան ձեռագրեր, որ ընդօրինակուած են եղել Կեչառիսի միաբանութեան գրչակենտրոնում: Աշխարհասիհւու 30 հազար հայերէն ձեռագրերից մօտ կէսն են նկարագրուած ու այդ գրաւոր յուշարձաններից մեծ մասն էլ յիշատակարաններ չունեն կամ թերի յիշատակարաններով են, ուստի անյայտ են մնում նման ձեռագրերի ընդօրինակման գրիչն ու ժամանակը, միջավայրն ու տեղը:

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

33 ՄՄ ձեռ. 3603, 332ր:

34 ՍՄԲԱՏԵԱՆ, Մ., *Տեղագիր Գեղարքումեաց ծովագարդ գաւառի*, որ այ ժըմ՝ նոր Բայազիտ գաւառ, Եղմիածին 1898, 44:

35 ՄՄ ձեռ. 335, 263ա: ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Ա., *Շողագավանքի գրչութեան կենտրոնը*, ի Եղմիածին 2003, Ա., 73, եւ ծնբ. 20:

Summary

THE CENTRE OF DUPLICATION OF ARMENIAN LITERARY CULTURE IN THE MONASTERY OF KECHARIS

ARPENIK GHAZAROSIAN

The centres of duplication of Armenian literary culture have an important role in the creation of the rich culture of the Armenian people. The entire medieval Armenian written heritage – including historiographical, theological, philosophical, scientific, and other works – was edited, duplicated, and brought into its final form in these centres. There were centres of duplication of Armenian written culture in hundreds of monasteries of Armenia in different periods of history. They were also to be found in different countries of the world.

One of them was the famous monastery of Kecharis. Only three manuscripts produced in this centre are extant, and we have information from colophons about three other manuscripts produced there. The first piece of information involves the *Commentary on the Gospels of John and Luke by Sargis Kound*, written by Andre (1184).

The first manuscript produced in Kecharis that is extant is from 1491. It is a Gospel in parchment written by Abbot Galoust and illustrated by the miniaturist Mkrtich. We also know that another Gospel of the same copyist was written there in the same year, but we do not have any futher information about it. At the end of the 15th century (1499) a “Mashtots Handbook” was prepared. The other two extant manuscripts from Kecharis where produced in the 16th century. These are the Gospels copied for Archbishop Mattheos (1561, 1564) illustrated by the famous miniaturist Philipos. The second one was made by Yesayi the copyist.